

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԷՊՈՍԸ

IX դարից ի վեր հստակորեն տարբերակվում են ռոմանական լեզուները, առաջին հերթին՝ հին ֆրանսերենը, և ստեղծվում են գեղարվեստական խոսքի առաջին մուշներն այդ լեզուներով: Ժողովրդական լատիներենից անցումը հին ֆրանսերենին, ինչպես նաև ֆրանսիացիների համախմբումն իբրև առանձին էթնիկական միավոր, համընկնում են Ֆրանկյան թագավորության Կարոլինգյան ժամանակաշրջանին (VIII—IX դդ.): Այդ պատմաշրջանը հանդես է բերված իբրև *վիպական ժամանակ* ֆրանսիական (նաև իսպանական) հերոսական էպոսում, որը հիմնականում ձևավորվել է IX—X դարերում բանավոր ճանապարհով, ապա մինչև XIV դարը անցել է նաև գրավոր ավանդույթի միջով:

Ֆրանսիական հերոսական էպոսից պահպանվել են հարյուրի չափ ասքեր, որոնք կոչվում են «*Շանսոն դը ժեսո*» («Սխրանքի երգեր»): Այդ ասքերը հորինված են չափածո, տասնավանկ տողերով, որոնք կապակցվում են ասոնանսներով (ուշ խմբագրություններում՝ ճշգրիտ հանգերով): Բաժանված են անհավասար մեծության տների (*տիրադներ*), որոնք ունեն 5-ից մինչև 40 տողեր: Մեզ հասած ասքերը հիմնականում երկարաշունչ ստեղծագործություններ են (1000-ից մինչև 20000 տող), որոնք կազմավորվել են ժամանակի ընթացքում վիպական կարճ երգերի (*կանտիլեն*) համադրումներից: Այդ երգերի ու ասքերի ասացող-կատարողները *ժոնգլյորներն* էին՝ թափառիկ ժողովրդական երգիչները, որոնք նման էին մեր հին գուսաներին կամ վիպասաններին: Նրանք հերոսական էպոսը ներկայացնում էին

թվերգով (*ոեչիտատիվ*), փոքրիկ տավղի կամ ավելի հաճախ վիոլայի նվագակցությամբ՝ հանդես գալով Ֆրանսիայով մեկ, քաղաքների հրապարակներում, տոնավաճառներին կամ ասպետական դրյակներում: Կատարումը երբեմն ձգվում էր մի քանի օր, անգամ մի ամբողջ շաբաթ:

Ինչպես յուրաքանչյուր էպոսի, այնպես էլ ֆրանսիականի հիմքում ընկած են պատմական անցքերի շուրջ հորինված ժողովրդական ավանդությունները, որոնք բանավոր, ապա նաև գրավոր ճանապարհով միահիշուսվում են ու վերածվում վիպերգության: Դա տեղի է ունենում այն ժամանակ, երբ ժողովուրդը ձեռք է բերում ինքնագիտակցություն և դրա գեղարվեստական արտացոլման պահանջ և երբ արդեն հնարավոր է դառնում անհատական ստեղծագործության փաստը, որը, սակայն, դեռ չի գիտակցվում որպես այդպիսին: Այս ամենը համապատասխանում է ավատատիրության ձևավորման շրջանին, երբ արդեն նկատելի է ժողովրդի քաղաքական միասնության գիտակցությունը և երբ ասպարեզ են իջնում ժողովրդական անհատական պրոֆեսիոնալ երգիչները: Ֆրանսիայի համար դա IX—XII դարերն են, և այդ ժամանակ էլ հիմնականում կազմավորվել է նրա էպոսը: Ֆրանսիական էպոսն, ըստ այսմ, Ֆրանսիայի մի քանի հարյուրամյակի «բանաստեղծական պատմությունն է», ժողովրդի կյանքի ամբողջական արտացոլումը՝ հիմնականում գաղափարական-գեղարվեստական բարձր մակարդակով:

Ֆրանսիական էպոսը հարուստ է հերոսական-ոռմանային տարրերով, չափազանցություն-հիպերբոլաներով, գրոտեսկներով, զուգահեռականությամբ և այլ վիպական արտահայտչամիջոցներով: Այստեղ առկա են նաև ժողովրդական վիպերգերին հատուկ կրկնությունները, պատրաստի բանաձևերը, կայուն մակդիրները: Հաճախ համանման արտահայտություններով են պատկերվում երևույթները՝ զորահավաք, մեծամարտ, հետապնդում, ծաղր, երազ, ափսոսանք և այլն: Պատմողը երբեմն «առաջ ընկնելով»՝ հիշատակում է դեռևս չկատարված դեպքեր, շարժելով ունկնդրի հետաքրքրությունը և հրավիրելով վերջինիս ուշադրությունը իրողությունների դրամատիկական ընթացքի վրա:

Վիպերգերի հերոսների մեծ մասի նախատիպերը Կարոլինգյան ժամանակաշրջանից են: Դրանց մեջ են ֆրանկ թագավորներ Կարլոս Մարտելը, Կարլոս Մեծը, Լյուդովիկոս Բարեպաշտը, բարոն Գիլյոմը (որն անչափահաս Լյուդովիկոսի փոխարեն պատերազմել է Իսպանիայում), Հերարդ կոմսը (որը թշնամացել է իր սյուզերենին՝ Կարլոս Մեծի) և այլն: Հերոսական ասքերում նշանակալից տեղ են գրավում արաբների (*մավրերի*, *սարակիճուների*) դեմ մղված պատերազմները: Բայց թերևս ավելի կենտրոնական տեղ է տրված խոշոր ավատատեր-ասպետների հակամարտություններին թագավորների կամ միմյանց դեմ:

Գեռև XIII դարում կատարված դասակարգումով ֆրանսիական հերոսական ասքերի վիթխարի բազմությունը բաժանվում է երեք հիմնական շարքերի, որոնք արտացոլում են հերոսական էպոսի գաղափարաբանության կարևոր գծերը: Այդ շարքերը ստացել են հետևյալ պայմանական խորագրերը. «Ֆրանսիայի թագավորի ասքեր», «Գարեն դը Մոնգլանի ասքեր» և «Դոն դը Մայանսի ասքեր»: Առաջին շարքի կենտրոնում Ֆրանսիայի արքան է՝ հայրենիքն արտաքին թշնամիներից պաշտպանող և ներքին պառակտիչներին պատուհասող *սենյորի* կամ *սյուզերենի* գաղափարակիր կերպարը: Երկրորդ շարքում գերիշխում է հայրենիքին ու սենյորին անշահախնդրորեն ծառայող *վասսալի* իդեալական կերպարը: Մինչդեռ երրորդ շարքի գլխավոր դեմքը անհնազանդ վասսալն է, որն իր ուժերով կամ արտաքին թշնամու հետ միաբանված էլնում է իր սյուզերենի դեմ: Այս երեք շարքերը միավորվում են միասնական, միապետական հայրենիքի գաղափարի շուրջ, թեև որոշ ասքերում առկա են նաև գաղափարական բնույթի տարբեր շեղումներ:

«Ֆրանսիայի արքայի» ասքերում հանդես է գալիս վիպական «Քաղցրիկ Ֆրանսիայի» տերը՝ «ալեհեր Կարլոս արքան», որի նախատիպը Կարոլինգյան հարստության ամենախոշոր գահակալ Կարլոս Մեծն է (742–814): Նա 800 թվականին օծվել է Արևմուտքի կայսր և իր վարած բազմաթիվ փառապանծ արշավանքների շնորհիվ ընդարձակել է Ֆրանկյան պետության սահմանները, հրապարակել է օրենքներ, հովանավորել է կրթությունն ու

մշակույթը: Այս խոշոր գաճակալի կերպարը էպոսի ստեղծողները զարդարել են լուսապսակով, վերագրելով նրան նաև իր որոշ քաջարի նախորդների ու հետնորդների սխրանքները: Ալեհեր արքան միշտ իմաստուն է և արդարամիտ, ներող է ու զթառատ, թեև անհրաժեշտության դեպքում կարող է լինել և շատ խստասիրտ: Անողոք է հատկապես հայրեցիքի դավաճանների հանդեպ: Անպարտելի է մարտադաշտում: Որոշ ասքերում գործողությունները բացառապես զարգանում են Կարլոս արքայի շուրջ: Հաղորդակից ենք լինում նրա սխրանքներին, ծանոթանում ենք նրա երիտասարդության շրջանին, երբ նա դավադիրներից խույս տալով՝ փախչում է Իսպանիա, քաջաբար մարտնչում է այնտեղ և արժանանում մավրիտանական արքայադստեր սիրուն: Այնուհետև վերադառնում է Ֆրանսիա և պատժելով չարագործներին՝ գահ է բարձրանում: Հիշենք նաև «Կարլոս Մեծի ուխտագնացությունը» ասքը, որտեղ ֆրանկ արքան և նրա հավատարիմ ասպետները՝ *պերերը* (Ռոլանդ, Օլիվեր, Այմերի) հանդես են գալիս իբրև հեքիաթային դյուցազուն-հսկաներ, որոնք, պարծենալով իրենց ուժով, որոշում են «չափվել» հունաց արքա Հուգոնի հետ և հաղթում են նրան Երուսաղեմից բերած սուրբ Աշխարհների շնորհիվ:

«Ֆրանսիայի արքայի» շարքի որոշ ասքերում Կարլոս արքան գլխավոր գործող անձի դերը զիջում է իր ասպետներին, հատկապես պետության պատվարները հանդիսացող տասներկու պերերին, և առաջին հերթին՝ Ռոլանդին:

«Ռոլանդի երգը» ոչ միայն «Ֆրանսիայի արքայի» շարքի, այլև ողջ ֆրանսիական հերոսական էպոսի խոշորագույն հուշարձանն է: Այն գտել է համաեվրոպական հնչեղություն և իրավամբ համարվում է միջնադարյան եվրոպական պոեզիայի գագաթներից մեկը: Ասքի հնագույն խմբագրությունը պահպանվել է Անգլիայում շուրջ 1065 թվականին անգլո-նորմանդական գրչագրողի ընդօրինակած ձեռագրում (Օքսֆորդյան բնագիր): Կազմված է 4002 ասոնանսային տողերից, որոնց վերջում հիշատակվում է ոմն Տուրոլդոս: Որոշ ուսումնասիրողներ նրան են համարում ասքի հեղինակ, բայց ավելի հավանական է, որ նա

անգլո-նորմանդական վարկածի գրիչը կամ հիմնական խմբագիրն է: XIV դարի մի ձեռագրից հայտնի է նաև, այսպես կոչված, վեճետիկյան ասոցիացիան բնագիրը (ֆրանս-իտալական բարբառով), որ գործածել են իտալացի ժողովրդական երգիչները: Պահպանվել են նաև ասքի հանգավոր տարբերակների երկու խումբ՝ գրի առած XIII–XIV դարերում (գտնվում են Վեճետիկի, Փարիզի, Լիոնի, Քեմբրիջի գրադարաններում և Շատուրում):

Տուրուդումն է եղել, թե ոչ խնդրո առարկա ասքի հնագույն տարբերակի հեղինակը՝ չգիտենք, բայց մի բան պարզ է, որ նա եղել է իր ժամանակի ուսյալ մարդկանցից մեկը, ընդամենն նաև՝ բավական շնորհալի: Ինչպես ցույց է տվել բնագրագիտական քննությունը, նա ասքում որոշ ներմուծումներ է կատարել թե՛ սյուժետային և թե՛ ոճական առումներով: Սակայն տվյալ դեպքում կարևորը ոչ այնքան նրա անհատականության կմիքն է, որքան այն, որ նա կարողացել է անադարտորեն պահպանել ժողովրդական հերոսական ասքի խոր իմաստն ու արտահայտչականությունը, այսինքն՝ հանդես է եկել ավելի շատ իբրև ասացող-բանահավաք, քան բանաստեղծ: Դա, ինչ խոսք, նաև ժամանակի պահանջն էր, որին լիովի հագուրդ է տվել նշված տարբերակի հեղինակը:

«Ռոլանդի երգը» ասքում պատմվում է, թե ինչպես Պիրենեյան լեռնաշղթայի Ռոնսևալ կիրճում մավրերի (*սարակիանների*) հարձակմանն է ենթարկվում յոթնամյա հաղթարշավից հետո Իսպանիայից Ֆրանսիա շարժվող Կարլոս արքայի բանակի վերջապահ գունդը, որը ղեկավարում էր արքայի ազգականն ու սիրելին՝ կոմս Ռոլանդը: Վերջինս իր կաթնեղբայր Օլիվերի և մյուս պերերի հետ միասին զոհվում է հանուն «Քաղցրիկ Ֆրանսիայի» և քրիստոնեական հավատի, դյուցազնաբար մարտնչելով մուսուլման մավրերի անթիվ-անհամար զորքերի դեմ: Ռոլանդի մահվան պատճառը նրա խորթ հայրն էր՝ դավաճան Գանելոնը, որը պանծալի հերոսի դեմ նախանձով լցված՝ դավում է նրան, գործակցելով Սարագոսի մավր արքա Մարսիլիոսի հետ: Ռոլանդի և մյուս նահատակ ասպետների վրեժը լուծում է ավեհեր Կարլ արքան, որը ոչնչացնում է ողջ մուսուլմանական աշխարհից

գումարված վիթխարի բանակը և չարաչար պատժում մատնիչ Գանելոնին:

«Ռուլանդի երգի» այուժեի հիմքում ընկած են որոշակի պատմական փաստեր, որոնք արձանագրել են ֆրանսիացի և արաբ ժամանակագիրները, հատկապես Կարլոս Մեծի արքունական ժամանակագիր Էյնհարդը (մոտ 775–840) «Կարլոս Մեծի կյանքի պատմությունը» գրքում (մոտ 830 թ.): Ըստ ժամանակագիրների վկայությունների, 778 թվականին մուսուլման տերերից մեկը՝ Իբն-ալ-Արաբին, Իսպանիա՝ օգնության է կանչում Կարլոս Մեծին՝ համատեղ պատերազմելու Կորդովայի խալիֆ Աբդեռահմանի դեմ: Նա օգնության համար խոստանում է Կարլոսին հանձնել Սարագոսը, սակայն վերջինիս տերը հրաժարվում է ֆրանկներին աներ թողնել, և Կարլոս արքան ստիպված է լինում հեռանալ. մանավանդ լսել էր, որ իր երկրում ապստամբել էին սաքսերը: Երբ Կարլոսի բանակը անցնում էր Պիրենեյան լեռնաշղթան, բասկերը, ֆրանկների կործանած Պամպլոնա քաղաքի վրեժը լուծելու համար, Ռոնսևալի կիրճում հարձակվում են բանակի վերջապահ զնդի վրա և ջախջախում: Արաբական աղբյուրների հիման վրա ենթադրվում է, որ այդ ճակատամարտին որոշ մասնակցություն են ունեցել նաև մավրերը՝ ազատելով Կարլոս արքայի կողմից պատանդ վերցված Իբն-ալ-Արաբիին: Ռոնսևալի ճակատամարտում զոհվում են մի շարք նշանավոր ֆրանկ ասպետներ, ի թիվս որոնց Էյնհարդի ժամանակագրության որոշ ձեռագիր ընդօրինակություններ հիշատակում են նաև *«Բրետոնյան մարկի պրեֆեկտ Հրուոդյանդին»*, որ վիպական Ռուլանդի նախատիպն է: Դրանից հետո բասկերը փախչում են, և նրանց հնարավոր չի լինում հնազանդեցնել:

Այս պատմական անցքերը, արտացոլվելով ժողովրդական ստեղծագործության մեջ, ժամանակի ընթացքում պատմական այլ իրողությունների ու հիշողությունների, նաև քաղաքական տրամադրությունների ու գաղափարների ներգործությամբ այլափոխվել են: Իսպանիայում Կարլոս Մեծի կարճատև և անհաջող արշավանքը փոխարինվել է յոթնամյա հաղթական պատերազմով, ողջ Իսպանիայի գրավումով և անհավատ ցեղերի պար-

տությամբ: Քրիստոնյա բասկերին փոխարինել են մուսուլման մավրերը, և ֆրանկների ողբերգության պատճառ է դարձել կոմս Գանելոնի դավաճանությունը:

«Ռոլանդի երգի» նախնական բանահյուսական տարբերակը, իբրև ժողովրդական ավանդություն, ամենայն հավանականությամբ ծագել է հիշյալ պատմական անցքերից որոշ ժամանակ անց, IX դարում: Որոշ ուսումնասիրողներ (ինչպես իսպանացի Ռամոն Մենենդես Պիդալը) ենթադրում են, որ Ռոլանդի մասին մեզ հայտնի ասքը ևս, իր հիմնական սյուժետային ու գաղափարական գծերով, արդեն եղել է նույն այդ դարում: Սրա համար, սակայն, ոչ մի լուրջ ապացույց չկա: Վիլլամ Մալմսբերիացու (XII դարի սկիզբ) ժամանակագրության վկայությամբ, 1066 թվականին Հասթինգսի ճակատամարտից առաջ նորմանդացի ժոնգլորը կատարել է «Ռոլանդի մասին կանտիլեն»: Ըստ երևույթին, դա համեմատաբար փոքրածավալ երգ է եղել: Հատկանշական է նաև այն, որ XI դարի մի լատինական ձեռագրում համառոտակի վերաշարադրված է «Ռոլանդի երգի» նախնական տարբերակի բովանդակությունը: Այստեղ Կարլոս արքայի իսպանական արշավանքը սահմանափակված է սոսկ Սարագոսի պաշարմամբ, և Գանելոնի անունն անգամ չի տրվում:

«Ռոլանդի երգի» առկա բնագրային խմբագրությունների վերլուծությունն ու համեմատությունը մասնագետներին բերել է այն եզրակացության, որ IX դարում ձևավորված ավանդության հիմնական միջուկին հետագայում աստիճանաբար ներհյուսվել են այլ դրվագներ ու կերպարներ, ինչպես՝ Գանելոնի դավաճանությունը, Բլանկանդրիին դեսպանորդությունը, Ռոլանդի հարսնացուի կերպարը, Կարլոսի պատերազմը Բալիզանտի մուսուլմանական բանակի դեմ: Մի բան հաստատ է, որ XI դարի կեսերին արդեն նախնական ավանդությունների ու փոքրիկ վիպական երգերի կողքին և դրանց հիմքի վրա գոյություն է ունեցել «Ռոլանդի երգը» իր հիմնական սյուժետով ու գաղափարաբանությամբ, և այդ ասքի մի մշակում-խմբագրումն է հնագույն Օքսֆորդյան բնագիրը:

«Ռոլանդի երգը» ասքն արգասիք է այն գաղափարական-

քաղաքական մթնոլորտի, որի արդյունքը եղավ առաջին խաչակրաց արշավանքը (1096–1099): Ահա թե ինչու ասքում քրիստոնյա բասկերին փոխարինել են մուսուլման մավրերը, և Կարլոս Մեծի կարճատև ու անհաջող արշավանքն Իսպանիայում վերածվել է մուսուլմանության դեմ քրիստոնեության հաղթարշավի, որտեղ շեշտված է հատկապես ֆրանսիացիների առաքելությունը: Այս գաղափարաբանությունը վիպերգում դրսևորվել է աղոթքների, տեսիլքների, երկնային մախանձանների, կրոնական կոչերի, ինչպես նաև մի շարք կերպարների միջոցով: Վսեմաշուք և ազնիվ Կարլոս արքան այստեղ ներկայացված է նաև որպես բարեպաշտ հավատացյալ, ողջ քրիստոնեական աշխարհի ապավեն ու պատվար: Նրա ձայնը լսելի է Աստծուն, որը, նրա աղոթքին անսալով, կանգնեցնում է արևի ընթացքը՝ երկարացնելու համար ցերեկային լույսը, որպեսզի քրիստոնյա արքան վերջնականապես ջախջախի անհավատ թշնամու ճողոպրող հորդաները: Ինչ վերաբերում է Ռոլանդին, ապա նա երկակի բնույթի ասպետ է, նա վասսալն է թե՛ արքայի և թե՛ Աստծո, որին իբրև սյուզերենի, մեռնելիս, մեկնում է իր ձեռնոցը: Եվ վերջապես ասքում որպես մեկ այլ իդեալ-կերպար հանդես է գալիս նաև եպիսկոպոս Տուրպինը, որը մարմնավորում է խաչի ու սրի միասնությունը անհավատների դեմ մղվող պայքարում:

Վիպերգության մեջ, սակայն, Ռոլանդը միայն ազգային-կրոնական գաղափարների մարմնացում և Աստծո ու թագավորի հավատարիմ վասսալի կերպար չէ: Նա տիպիկ վիպական հերոս է, որի բնավորությանը հատուկ են դյուցազնականությունն ու չափազանցությունը, ինչպես Աքիլլեսին կամ Սասունցի Դավթին: Բայց և վերջիններիս նման նա նաև շատ մարդկային է: Ասպետ է, բայց զերծ է իր խավիհն բնորոշ հոռի գծերից՝ ավելորդ ինքնասիրությունից ու պատվախնդրությունից, դաժանությունից ու անիշխանականությունից: Նա լի է երիտասարդական կորովով, մղվում է դեպի սխրանքը՝ հավատալով իր գործի արդարությանը և միշտ վստահ իր ուժին ու հաջողությանը: Երբեք չի կորցնում ազնվությունը, մեծահոգությունը. խորին պատկառանքով է լցված Կարլոս արքայի հանդեպ, որին սակայն երբեք չի սիրաշահում՝

միշտ մնալով վեհանձն ու համարձակ: Ասքի սկզբում նա անկեղծորեն է տրամադրված իր խորթ հոր՝ Գանելունի հանդեպ, որին իսկապես ցանկանում է պատիվ անել՝ առաջարկելով դեսպանության գավազանը: Ջերմ զգացում է տածում իր զինակից ընկերների և հատկապես Օլիվերի հանդեպ, որին կոչում է կաթնեղբայր: Ռոլանդի մեջ թերևս ամենից ավելի շեշտված է հայրենասիրական զգացումը: Նրա համար ամենից բարձր է ու նվիրական իր «Քաղցրիկ Ֆրանսիան», հանուն որի և մարտնչում է հերոսաբար ու նահատակվում: Այսպիսի հայրենամկեր դյուցազունի կերպարը, ինչպես և առհասարակ հայրենի հողի նկատմամբ սերը, ըստ բանագետների, առավել բնորոշ է զարգացած միջնադարյան մշակույթի ժամանակաշրջանում ստեղծված էպոսներին, այդ թվում նաև հայկական ժողովրդական էպոսին:

Ռոլանդի հակապատկերն է կոմս Գանելունը: Նրա մեջ առկա է մարդ արարածին հավերժորեն ուղեկցող «չարյաց արմատը», որ հակառակ է ամեն մի լավ ու բարի գործի: Նա կրում է նաև իր խավին՝ ավատատիրությանը հատուկ անիշխանական եսասիրությունն ու անհնազանդությունը: Ընդ որում, այդ ամենը նրա մեջ զուգակցված են դյուցազնականությանն ու վայելուչ արտաքինին. մի բան, որ այդ կերպարը դարձնում է միաժամանակ ատելի և տպավորիչ: Գանելունը, որ ստիպված պահպանում էր իր վասսալական հավատարմությունը Կարլոս արքային, Ռոլանդի հանդեպ տածած չարությունից ու նախանձից դրդված՝ դավաճանում է թագավորին և Ռոլանդի մահվան ու ֆրանսիական բանակի պարտության պատճառ դառնում: Սա նշանակում է, որ նա դավաճանում է հայրենիքին, ուստիև դատապարտվում է մահվան ոչ միայն կամոքն թագավորի, այլև Աստծո (Պինաբելի և Թիերիի վճռական մեծամարտը):

Ռոլանդին հակահամադրված է իր կաթնեղբայր Օլիվերը: Այստեղ առկա են ոչ թե թշնամի ուժեր, այլ իրարից տարբեր և իրար լրացնող երկու հայրենամկեր հերոսներ: Երբ ֆրանկների վերջապահ գունդը հարձակման է ենթարկվում, Օլիվերն իր զինակից ընկերների ու հայրենակիցների անխուսափելի կորուստը կանխելու համար երիցս խնդրում է Ռոլանդին փչել շեփորը

(Օլիֆանը) և օգնության կանչել Կարլոս արքային: Սակայն Ռոլանդը երիցս մերժում է նրան, այդ քայլն անպատվություն համարելով ոչ միայն իր, այլև իր տոհմի և ողջ Ֆրանսիայի համար: Ռոլանդի այս խենթ համարձակությանը հակադրված է Օլիվերի ողջամտությունը, բայց այդ հակադրության մեջ իրավացի ու սիրելի են երկու կողմն էլ: Իրավացի էր Օլիվերը, քանի որ ի վերջո Ռոլանդի անմիտ խիզախության պատճառով գլխովին ջախջախվում է ողջ գուևդը և սպանվում են տասներկու պերերը: Բայց և իրավացի էր Ռոլանդը, որն ի վերջո բարոյական հաղթանակ է տանում թշնամու նկատմամբ. մեռնում է որպես անպարտ դուցազուն՝ ստիպելով մավրերի խառնամբոխ հորդաներին թողնել մարտի դաշտը և խուճապահար փախչել: Իր և իր զինակիցների մահով նա պանծացնում է հող հայրենին՝ «Քաղցրիկ Ֆրանսիան», ավելի բարձրացնելով նրա պատիվն ու փառքը: Ռոլանդի և Օլիվերի հակադրությունը ինքնօրինակ հակադրությունն է բանականության ու զգացմունքի, ողջամտության ու խենթության, չափավորության ու չափազանցության, որոնք, սակայն, եթե արդյունք են ազնիվ մղումների, հայրենիքի հանդեպ սիրո, ապա արդարացի են ու գնահատելի: Եվ այս պարագայում ճիշտ է վարվել ասքի հեղինակը կամ մշակողը՝ միանշանակորեն չգերադասելով մեկը մյուսից: Դա ասքի գաղափարական-գեղարվեստական խոշոր արժանիքներից է:

Առհասարակ, «Ռոլանդի երգի» գեղարվեստական արժանիքները պայմանավորված են ժողովրդական վիպական բանավեստի և անհատական բանաստեղծական կատարման ինքնատիպ զուգակցումով: Ասքն ունի ներդաշնակ կոմպոզիցիոն կառուցվածք, կերպարների տրամաբանված համակարգ, տների հստակ կազմություն, պատկերավորման և արտահայտչական միջոցների բազմազանություն:

Ինչպես նկատել են ուսումնասիրողները, ասքի գործողությունների ընթացքը որոշակիորեն ընդգրկում է *հանգույցը* (Գանելունի դավաճանությունը), *կուլմինացիան* (ճակատամարտը) և *լուծումը* (Կարլոսի վրեժը), որոնք իրենց հերթին բաժանվում են երկուական ներհակ փուլերի. հանգույցը ներառում է Բլանկանդ-

րիճի և Գանելոճի փոխադարձ դեպքանորոգությունները, կուլմի-նացիան՝ Մարսիլիոսի դեմ մղված երկու տարբեր (հաղթական և ֆրանկների համար կործանարար) ճակատամարտերը, լուծումը՝ մավրերի, ապա նաև դավաճան Գանելոճի պատիժը:

«Ռոլանդի երգին», ինչպես առհասարակ ֆրանսիական հե-րոսական էպոսի մյուս ասքերին, բնորոշ չեն դիցաբանական տարրերը, որոնց երբեմն փոխարինում են քրիստոնեական սիմվոլիկայի որոշ դրսևորումներ: Ասքն ունի խիստ ուզմական բնույթ: Այստեղ չկան կենցաղային պատկերներ, խրախճանք-ների ու սիրային տեսարանների նկարագրություններ. Ռոլանդի հարսնացուն՝ Ալդան, որ մեռնում է վշտից, հանդես է գալիս միայն ասքի վերջում, շատ թոռուցիկ: Մանրամասնորեն նկարա-գրվում են միայն ճակատամարտերը, մենամարտերը, ուզմական խորհուրդները, դեպքանորոգությունները և այլն:

«Ռոլանդի երգը» վիպական խիստ ոճի լավագույն նմուշն է ֆրանսիական միջնադարյան գրականության մեջ: Ասքի տները կազմում են ձուլյլ ամբողջականություն, շարադրված են աշխույժ սեղմությամբ ու վսեմ շնչով, միաժամանակ քնարական են ու վի-պական, երբեմն հագեցած խոր դրամատիզմով ու ողբերգական երանգավորումով: Այս ամենի շնորհիվ այն չափազանց լայն տարածում է գտել ոչ միայն իր հայրենիքում, այլև եվրոպական գրեթե բոլոր երկրներում և դեռևս միջին դարերում թարգմանվել, փոխադրվել կամ վերամշակվել է անգլերեն, գերմաներեն, իտա-լերեն, իսպաներեն, սկանդինավյան, կելտական լեզուներով: Նշանավոր է դեռևս XII դարում (մոտ 1170 թ.) ստեղծված գերմա-նական տարբերակը, որ վերագրվում է ոմն Կոնրադի: Հիշարժան են նաև հին սկանդինավերեն «Կարլմանգոսագան» (մոտ 1240 թ.) և երկու լատիներեն մշակումները՝ «Երգ Գվեճոնի դավաճանու-թյան մասին» և «Կարլոս Մեծի և Ռոլանդի պատմությունը» (այս-պես կոչված՝ Կեղծ-Տուրպինի ժամանակագրությունը): Ռոլանդի մասին ավանդություններն ու երգերը իտալացի ժողովրդական երգիչ-ասացողների (*կանտաստորներ*) միջոցով անցել է նաև Իտալիա, որտեղ մշակվել են Վերածննդի շրջանի բանաստեղծ-ների գրչով: Հիշենք Լուիջի Պուչչիի «Մեծ Մորգանտեն» (1478),

Մատեն Մարիա Բոյարդոյի «Սիրահարված Օղյանդոն» (1494) և Լոդովիկո Արիոստոյի «Մոլեզին Օղյանդոն» (1516) ասքերը:

Ռոլանդի կերպարն արտացոլվել է նաև նոր շրջանի որոշ ֆրանսիացի բանաստեղծների երկերում, որոնցից հիշարժան է հատկապես Ալֆրեդ դը Վիգնիի «Շեփորը», որ ներկայացնում է Ռոլանդի մասին ավանդության քիչ հայտնի մի տարբերակ (տե՛ս այս հատորի հավելվածը):

* * *

«Ռոլանդի երգին» որոշ չափով առնչակցվել է նաև մեր ժողովուրդը: Նախ և առաջ նշենք, որ ասքում ուղղակիորեն հիշատակված են հայերը, որոնք հանդես են բերված Բալիզանտի մուսուլմանական-հեթանոսական բանակի կազմում, մավրերի հետ մեկտեղ (տող 3227): Նույն այդ պատճառով ֆրանսիական հերոսական էպոսի մի քանի այլ ասքերի մեջ հայերը հանդես են գալիս նաև որպես մուսուլման եթովպացիների կամ հեթանոս ասքերի ցեղակից ու զինակից: Ռա, անշուշտ, այդ ժամանակ հայերի մասին ֆրանսիացիների ունեցած խիստ անբավարար տեղեկության արդյունք էր: Հայ-ֆրանսիական գրապատմական հարաբերությունների մասնագետ Գոհար Կարազոյզյանի մեկնաբանությամբ, «*Առօրեական մտածողությանը հատուկ «յուրային» սեփական և «օտար» (տվյալ դեպքում՝ հայ) ժողովուրդների մասին պատկերացումը մարմնավորող էթնիկական ստերեոտիպը կառուցված է տարածքային ընդհանրության, աշխարհի աշխարհագրական բաժանման վրա» («Պատմա-բանասիրական հանդես», 1982, 1, էջ 113): Ծատ չանցած, սակայն, հայ-ֆրանսիական կապերի սերտացման շնորհիվ մեր ժողովրդի մասին ֆրանսիացիները շատ ավելի ճիշտ պատկերացում կազմեցին, որն արտացոլվեց ֆրանսիական մի շարք ուղեգրություններում և ասպետական վեպերում...*

Իտալացի բանասեր Մ. Լ. Մենեզետտիի կարծիքով «Ռոլանդի երգը» արդեն XIII դարում տարածվել է նաև Հայաստանում, որն այդ ժամանակ «*դարձել էր ոռմանա-քրիստոնեական քաղա-*

քակրթության ծայր սահմանը սելջուկների, հետագայում նաև մոնղոլների ասպատակությունների դեմհանդիման» («Հայություն», 1994, թիվ 7): Այս վարկածի համար հիմք է ծառայել Գեղարդավանքի մի հարթաքանդակը, որի վրա պատկերված երկու ֆիգուրները, Մենեգետտիի ենթադրությամբ, ներկայացնում են Ռուլանդին և Օլիվերին: Անշուշտ, կարելի է վիճարկել այս կապակցությամբ իտալացի բանասերի բերած փաստարկները, բայց մի բան մեզ համար ընդունելի է, որ «Ռուլանդի երգը» միջին դարերում արդեն կարող էր տարածում գտնել Հայաստանում, հատկապես Կիլիկյան հայկական պետության մեջ, որն ամենաաներտ կապերի մեջ է եղել խաչակիրների հետ:

Ֆրանսիացի բանասեր Ժոզեֆ Բեդինն Օքսֆորդյան բնագրից նոր ֆրանսերեն է թարգմանել «Ռուլանդի երգը», որն առաջին անգամ լույս է տեսել 1922 թվականին: Գրանից անմիջապես հետո Բեդինի թարգմանության հիման վրա, ինչպես նաև հին ֆրանսերեն բնագրի բաղդատությամբ, անվանի բանասեր, թարգմանիչ հայր Արսեն Ղազիկյանը հայերեն է թարգմանել «Ռուլանդի երգը» («Ռուլանի երգը») և հրատարակել 1925 թվականին «Բազմավէպ»ում և առանձին գրքով (Վեներտիկ, Սուրբ Ղազարի Մխիթարյան տպարան): Գիրքն ունի մի փոքրիկ առաջաբան, որտեղ թարգմանիչը Լանսոնի «Ֆրանսիական գրականության պատմության» հիման վրա ներկայացրել է «Ռուլանդի երգի» արժանիքները: Ղազիկյանը թարգմանել է ասքը առանց ասոնանսային հանգերի, եռանդամ 11-վանկանի ոտանավորով, որ բավական մոտ է բնագրի չափին և լավ է հաղորդում ասքի վիպական շունչը: Ինչպես գրում է նա իր թարգմանության առաջաբանում. *«ջանացած եմ բնագրին ոճը՝ ոգին պահել որչափ կը ներեր կարողություս, և կը թողատրեր հայ լեզուն»:*

«Ռուլանդի երգի» հաջորդ ամբողջական թարգմանությունը (արևելահայերեն) կատարվել է ոուսերեն թարգմանություններից և լույս է տեսել Երևանում 1972 թվականին (թարգմանիչ Համո Հայրյան): Մինչ այդ, 1960-ական թվականներին, ասքի ամբողջական արևելահայերեն թարգմանություն է կատարել ֆրանսերենից հանգուցյալ բանաստեղծ Սլավիկ Չիլյանը: Սակայն այդ

Թարգմանության ձեռագրի մի մասն է միայն մեզ հաջողվել գտնել. ընդամենը 1056 տող, որ և մենք հրատարակել ենք մեր կազմած «Ֆրանսիական պոեզիա» գրքում (Երևան, 1984)՝ լրացնելով և ավելացնելով ևս 1340 տող, մինչև 175-րդ տիրադը (Ռոլանդի մահը): Ս. Չիլոյանը ևս նախընտրել էր եռանդամ 11-վանկանի ոտանավորը, առանց ասոնանսային հանգերի:

Այնուհետև մենք ձեռնարկեցինք ներկայացվող նոր ամբողջական թարգմանությունը, որի համար հիմք ենք ընդունել Ժ. Բեդիեի կազմած ժողովածուի 1966 թվականի Փարիզյան հրատարակությունը, որտեղ (ինչպես նախորդ բոլոր հրատարակություններում) ասքի հին ֆրանսերեն բնագրին զուգահեռ տրված է նոր ֆրանսերեն գիտական տողացի թարգմանությունը: Մենք ևս հիմնականում հետևել ենք նոր ֆրանսերեն թարգմանությանը, անհրաժեշտության դեպքում բաղդատելով այն հին ֆրանսերեն բնագրի հետ: Մեր ձեռքին եղել են նաև ասքի այլ ֆրանսերեն և ռուսերեն հրատարակություններ:

Հավատարիմ մնալով ստեղծված ավանդույթին, մեր թարգմանությունը կատարել ենք 11-վանկանի չափով, բայց, ի տարբերություն նախորդ թարգմանիչների, պահպանել ենք ասոնանսային հանգավորումը:

Ծանոթագրությունները կազմելիս օգտվել ենք ասքի ֆրանսերեն և ռուսերեն լավագույն հրատարակություններից:

Հենրիկ Բախչինյան